



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ԱՐՁՆԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ 22-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 7-ՐԴ ՄԱՍԻ և 80-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «ԱՐՁՆԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 7-րդ մասի և 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. 2022 թվականի մարտի 3-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել «ԱՐՁՆԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ դիմող) դիմումը, որով դիմողը խնդրել է.

«ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 7-րդ մասը և 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 75-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները»:

2. Դիմողը նշում է. «Սույն դեպքում թե՛ վարչական դատարանի և թե՛ վերաքննիչ վարչական դատարանի կայացրած «Հայցադիմումի ընդունումը մերժելու» և «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումներով դատարանը զրկել է սնանկ ճանաչված իրավաբանական անձին՝ Սահմանադրության 61-րդ հոդվածով ամրագրված դատական պաշտպանության իրավունքից»:

Ըստ դիմողի՝ ակնհայտ է, որ օրենսդիրը չի զրկում սնանկ ճանաչված իրավաբանական անձին իր իրավունքների պաշտպանության համար անձամբ դատարան դիմելու հնարավորությունից՝ չսահմանափակելով Սահմանադրության 61-րդ հոդվածով ամրագրված իրավունքը: Մինչդեռ Վարչական և Վերաքննիչ վարչական դատարանները ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 7-րդ կետը կիրառել են Սահմանադրությանը և Սահմանադրական դատարանի դիրքորոշումներին հակասող մեկնաբանությամբ:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող իրավական նորմերով ամրագրված չէ սնանկ ճանաչված անձի դատական պաշտպանության իրավունքի սահմանափակում, մինչդեռ իրավակիրառ պրակտիկայում ընկալումն այլ է: Դիմողի համոզմամբ՝ սնանկության կառավարչի որպես ներկայացուցիչ հանդես գալու իրավունքը դեռևս չի նշանակում, որ Ընկերությունը՝ ի դեմս իր տնօրենի, զրկված է դատարան դիմելու իրավական հնարավորությունից: Դիմողը գտնում է, որ խնդիրն իրականում շատ ավելի տեսական և խորքային բնույթ ունի՝ կախված սնանկության կառավարչի և սնանկ ճանաչված իրավաբանական անձի իրավական կարգավիճակից, վերջիններիս իրավասությունից, դատարանում որպես առանձին սուբյեկտ հանդես գալու, հայցադիմում ներկայացնելու իրավական հնարավորությունից: Վերաքննիչ դատարանի որոշման հիմքում դրված տրամաբանությունը կարող էր իրավաչափ համարվել այն պարագայում, երբ օրենսդիրը, նախատեսելով սնանկության կառավարչի՝ որպես ներկայացուցիչ հանդես գալու իրավունքը, միևնույն ժամանակ բացառեր այլ սուբյեկտի, օրինակ՝ ընկերության տնօրենի՝ ընկերության անունից հանդես գալու իրավական հնարավորությունը՝ սահմանափակելով ընկերության իրավասությունը, այդ թվում՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը:

Դիմողի կարծիքով՝ ըստ էության թե՛ Վարչական դատարանն իր՝ «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշման մեջ, թե՛ Վերաքննիչ վարչական դատարանը՝ «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման մեջ վկայակոչել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 7-րդ կետը, և որոշման պատճառաբանական մասում հանգել են այն եզրակացության, որ սնանկ ճանաչված ընկերությունը չունի դատավարական իրավասություն:

թյուն, և միայն սնանկության գործով կառավարիչն է օժտված նման դատավարական իրավասություններով: Մինչդեռ դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 7-րդ մասի կիրառման մեկնաբանությունը հակասում է Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների հիմքում ընկած տրամաբանությանը:

Դիմողը պնդում է, որ «Դատարանի կողմից կարող է կիրառվել ՎԴՕ 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը բացառապես այն դեպքում, երբ հայցադիմումը ներկայացվել է այն անձի կողմից, ով ՎԴՕ 3-րդ հոդվածով սահմանված սուբյեկտ չի հանդիսանում», որպիսի պայմաններում, դիմողի եզրահանգմամբ. « (...) դատարանի կողմից սնանկ ճանաչված իրավաբանական անձին ակնհայտորեն իրավունք չունեցող անձ դիտարկելը և այդ հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելը զրկում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված 61-րդ հոդվածով սահմանված դատական պաշտպանության իրավունքից: Իսկ նման հակասահմանադրական մեկնաբանությունը դատական համակարգում ձևավորում է հակասահմանադրական պրակտիկա»:

3. Ուսումնասիրելով ներկայացված դիմումը, դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ գործի քննությունն ամբողջությամբ մերժելու հիմք, որպիսի պայմաններում սույն գործի քննությունը **ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և

ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում: Հիշյալ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, կամ **դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:**

Սահմանադրական դատարանը վերահաստատում է, որ միայն ներքոգրյալ հիմքերի միաժամանակյա առկայության դեպքում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան.

1) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

2) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները. ընդ որում՝ **Սահմանադրական դատարանը փաստում է, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձը պետք է սպառի դատական պաշտպանության բոլոր միջոցները,**

3) երբ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Հիշատակված որևէ հիմքի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը **Սահմանադրական դատարանի դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:**

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

«ԱՐՁՆԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան ընդդեմ Պետական եկամուտների կոմիտեի՝ պետական եկա-

մուտների կոմիտեի 10.08.2020թ. թիվ 3000324/1 ակտն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին: Վարչական դատարանի 2021 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

Վերաքննիչ վարչական դատարանի 31.05.2021թ. «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշմամբ «ԱՐՁՆԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Վարչական դատարանի 24.02.2021թ. «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Վճռաբեկ դատարանը 28.07.2021թ. որոշել է վերադարձնել թիվ ՎԴ/1475/05/21 վարչական գործով Վերաքննիչ վարչական դատարանի 31.05.2021թ. «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ «ԱՐՁՆԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի բերած վճռաբեկ բողոքը՝ որոշմամբ նշված սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին բերելու համար սահմանելով հնգօրյա ժամկետ:

Վճռաբեկ դատարանը 01.09.2021թ. որոշել է թիվ ՎԴ/1475/05/21 վարչական գործով Վերաքննիչ վարչական դատարանի 31.05.2021թ. «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ «ԱՐՁՆԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի բերած վճռաբեկ բողոքը թողնել առանց քննության այն պատճառաբանությամբ, որ՝ *«Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանի 31.05.2021 թվականի որոշման դեմ սույն վճռաբեկ բողոքը փոստային առաքմամբ ներկայացվել է 18.08.2021 թվականին (հիմք՝ վճռաբեկ բողոքի ծրար), այսինքն՝ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, և չի ներկայացվել միջնորդություն վճռաբեկ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց քննության, քանի որ բողոքն ամբողջությամբ նոր ներկայացված բողոք համարելու պարագայում այն բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է»:*

Սույն գործի դատավարական նախապատմությունը Սահմանադրական դատարանին հիմք է տալիս եզրահանգելու, որ **դիմողը չի սպառել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ հիշատակված պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանն առանց քննության է թողել ներկայացված վճռաբեկ բողոքը, որպիսի պայման-**

ներում դիմողն իր գործողությունների հետևանքով, ըստ էության, չի իրացրել վճռաբեկ ատյանում դատական պաշտպանության՝ օրենսդրությամբ երաշխավորված իր իրավունքը:

Սահմանադրական դատարանը շեշտում է, որ սահմանադրական արդարադատություն հայցելու անձի իրավունքը, ինչպես նաև օրենսդրությամբ դրա իրացման նպատակով նախատեսված ընթացակարգային կարգավորումներն ինքնանպատակ չեն, ուստիև հայեցողաբար մեկնաբանվել չեն կարող: Այս համատեքստում Սահմանադրական դատարանը հարկ է համարում սահմանադրական արդարադատություն հայցող ֆիզիկական և իրավաբանական անձանց ուշադրությունը հրավիրել այն հանգամանքին, որ վերջիններս մինչև Սահմանադրական դատարան դիմելն օրենսդրական պարտականություն են կրում պահպանելու այն պահանջները, որոնք նախատեսված են Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողն իրավասու չէ դիմել Սահմանադրական դատարան, քանի որ չի սպառել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«ԱՐՁՆԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 7-րդ մասի և 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործի քննությունը մերժել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱԸ**



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ